Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 06-02-2021 թ. որոշմամբ**
**««ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ Մամիկոնյանց 30 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.00372 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 1999-09-20 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 00009237 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)10285598 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | arabkiruccf.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | aruccf@arabkirmc.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Շուշան Դավթյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 6 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ծրագրի անվանումը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Զինիչյան Հիշատակի Հիմնադրամ <<Սնանում վերականգնողական կենտրոնի հիմնման համար մասնագետների վերապատրաստման ծրագիր>> | 6026000 |
| | Հայ Օգնության Հիմնադրամ <<ՀՀ և Արցախից տարհանված ասթմայի ծանր ընթացք ունեցող 100 երեխայի համար չորս ամսվա դժվարամատչելի դեղորայքի ձեռք բերում>> | 5508000 |

Digitally signed by
DAVTYAN
SHUSHAN
6814730128
Date: 2021.07.12
13:00:08 AMT

| | | |
|---|---|---|
| | Սեմռա Պլյուս Հիմնադրամ <<ՔՈՎԻԴ-19-ի կանխարգելիչ պարագաների ձեռք բերում>> | 2998920 |
| | Սեմռա Պլյուս Հիմնադրամ <<Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ ՄՊԸ-ի հեղուկ թթվածնի համակարգի տեղադրում>> | 13692678 |
| | Էլեոնորեն հիմնադրամ <<Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոց Համագործակցության և զարգացման ծրագրերի իրականացման համար, բժշկական սարքերի ձեռք բերում, COVID -19 ախտորոշման ՊՇՌ լաբորատորիայի կառուցում>> | 87677365 |
| | Աստելլաս Ֆարմա Յուրոպ <<Տակրոլիմուսի որոշման ախտորոշիչ ռեակտիվների ձեռք բերման աջակցություն>> | 7912500 |
| | Ամերիկայի Սթարկի հիմնադրամ և Հայաստան լսողության աջակցության ծրագիր կազմակերպություն <<Համայնքահեն լսողության աջակցության ծառայություններ ծրագիր>> | 23731930 |
| | Հիրայր և Աննա Հովնանյան Հիմնադրամ <<ՔՈՎԻԴ-19 ժամանակավոր մեկուսացման մոդուլների կառուցման աջակցություն և կանխարգելիչ պարագաների ձեռք բերում>> | 33413359 |
| | Սեյվ Դը Չիլդրեն Ինթերնեշնլի Հայաստանյան Ներկայացուցչություն <<Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության ծրագիր>> | 663070 |
| | Իզմիրլյան Հիմնադրամ <<Մարի Իզմիրլյան մանկատան համար COVID-19-ի հետ կապված բժշկական ծառայությունների մատուցման համար պարագաների, նյութերի և ծառայությունների ձեռքբերում>> | 960000 |
| | Շվեյցարիայի դեսպանատուն <<ՔՈՎԻԴ - 19 պաշտպանիչ միջոցների ձեռք բերում>> | 150000 |
| | Հայ-Ամերիկյան Բժշկական Ասոցիացիա , ԱՄՆ <<Հայաստանի և Արցախի նյարդաբանական խնդիրներով երեխաների աջակցություն>> | 1044600 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Լեո Վարտանյան, ԱՄՆ <<Սոցիալապես անապահով երեխաների բժշկական օգնության կազմակերպում>> | 1088070 |
| | Ամալյա Մարտիրոսյան <<Սոցիալապես անապահով երեխաների բժշկական օգնության կազմակերպում>> | 846000 |
| | Մարիամ Սարգսյան <<COVID-19-ի հետ կապված բժշկական ծառայությունների մատուցման համար աջակցություն>> | 522590 |

| | | |
|---|---|---|
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 0 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | 0 | 0 |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | Դեղորայք, բժշկական պարագաներ, սարքեր | 162882006 |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | Բժշկական պարագաներ, սարքեր | 5854343 |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Ջինիշյանի Հիշատակի Հիմնադրամի հետ համատեղ Սևանում վերականգնողական կենտրոնի հիմնման համար մասնագետների վերապատրաստման ծրագիր | 4651793 | |
| Սեյվ Դը Չիլդրեն Հայաստանյան Ներկայացուցչության հետ համատեղ իրականացվող Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության ծրագիր | 663070 | |
| Ամերիկայի Սթարկի Լսողության Հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ծրագիր | 20969241 | |
| Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի հետ համատեղ համագործակցության ծրագիր ուղղված Հայաստանում մանկաբուժության և բժշկագիտության ճյուղերի զարգացմանը | 48893718 | |
| Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի հետ համատեղ համագործակցության ծրագրի շրջանակներում COVID -19 ախտորոշման ՊՇՌ լաբորատորիայի կառուցում | 19757000 | |
| Շվեյցարիայի Սեմռա Պլյուս Հիմնադրամի նվիրաբերված գումարի շրջանակներում Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ ՍՊԸ-ին հեղուկ թթվածնի համակարգի ներդրման համար աջակցություն | 13470875 | |
| Հովնանյան Հիմնադրամի դրամաշնորհի շրջանակներում COVID-19-ով հիվանդ երեխաների սպասարկման համար հիվանդանոցի հնարավորությունների ընդլայնում/ժամանակավոր մեկուսացման մասնաշենքի կառուցում, կանխարգելիչ միջոցների ձեռք բերում/ | 33413359 | |

| | |
|---|---|
| Աստելլաս Ֆարմա Յուրոպի աջակցությամբ օրգանների փոխպատվաստում անցած հիվանդների արյան մեջ տակրոլիմուսի բաղադրության որոշման համար ռեագենտների ձեռքերում և հանձնում Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ ՍՊԸ-ին | 3777000 |
| Իզմիրլյան Հիմնադրամի նվիրաբերած գումարի շրջանակներում Մարի Իզմիրլյան մանկատան համար COVID-19-ի հետ կապված բժշկական ծառայությունների մատուցման համար պարագաների, նյութերի և ծառայությունների ձեռքերում | 960000 |
| ՀՕՖ-ի նվիրաբերված գումարի շրջանակներում աջակցության ցուցաբերում բժշկական օգնության կարիք ունեցող սոցիալապես անապահով երեխաների | 268000 |
| Լեո Վարտանյանի նվիրաբերված գումարի շրջանակներում աջակցության ցուցաբերում բժշկական օգնության կարիք ունեցող սոցիալապես անապահով երեխաների | 418124 |
| Ամալյա Մարտիրոսյանի նվիրաբերած գումարի շրջանակներում աջակցության ցուցաբերում բժշկական օգնության կարիք ունեցող սոցիալապես անապահով երեխաների | 327500 |
| Մարիամ Սարգսյանի նվիրաբերած գումարի շրջանակներում ՔՈՎԻԴ -19 մողուլների ջեռուցման աշխատանքների իրականացում | 357645 |
| Շվեյցարիայի Դեսպանատան նվիրաբերած գումարի շրջանակներում պաշտպանիչ միջոցների ձեռք բերում | 150000 |
| Որպես մարդասիրական օգնություն ստացված ապրանքների, ինչպես նաև ձեռք բերված ապրանքների բաշխում «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ-ն և այլ բժշկական հաստատությունների | 230719865 |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 393847651 |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 378797190 |

Նշումներ՝

---

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___3___ թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________________________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամ

Ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Ծնթ. | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| Շնորհներից եկամուտ | 3 | 352,692 | 497,666 |
| Ծրագրային ծախսեր | 4 | (378,797) | (634,928) |
| Վարչական ծախսեր | 5 | (15,050) | (15,503) |
| **Գործառնական պակասուրդ** | | **(41,155)** | **(152,765)** |
| Ասոցիացված կազմակերպությունում ներդրումից եկամուտ | 9 | 134,905 | 156,037 |
| Տոկոսային եկամուտ | | - | 847 |
| Այլ օգուտ/(կորուստ), զուտ | | (2,973) | (50) |
| **Հավելուրդ մինչև հարկումը** | | **90,777** | **4,069** |
| Շահութահարկի գծով ծախս | | - | (169) |
| **Տարվա զուտ հավելուրդ** | | **90,777** | **3,900** |
| Կուտակված հավելուրդ տարեսկզբի դրությամբ | | 1,144,165 | 1,140,265 |
| **Կուտակված հավելուրդ տարեվերջի դրությամբ** | | **1,234,942** | **1,144,165** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի ղեկավարության կողմից 2021թ. ապրիլի 7-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շուշան Դավթյան
Տնօրեն

Նազելի Միհրյան
Գլխավոր հաշվապահ

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծնթ. | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 8 | 898 | 36,741 |
| Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ | 7 | 43,580 | 22,425 |
| Տրված փոխառություն | | - | 500 |
| Դրամական միջոցներ | 6 | 46,762 | 31,950 |
| | | **91,240** | **91,616** |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Ներդրում ասոցիացված կազմակերպությունում | 9 | 1,463,595 | 1,385,690 |
| | | **1,463,595** | **1,385,690** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **1,554,835** | **1,477,306** |
| **Պարտավորություններ** | | | |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 10 | 68,966 | 66,303 |
| Փոխառություններ | 11 | 21,500 | 37,500 |
| Կրեդիտորական պարտքեր | | 1,203 | 1,114 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **91,669** | **104,917** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎ** | | **1,463,166** | **1,372,389** |
| **Սեփական միջոցներ** | | | |
| Կուտակված հավելուրդ | | 1,234,942 | 1,144,165 |
| Հիմնադիրների ներդրում | | 228,224 | 228,224 |
| **Ընդամենը սեփական միջոցներ** | | **1,463,166** | **1,372,389** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի ղեկավարության կողմից 2021թ. ապրիլի 7-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շուշան Դավթյան
Տնօրեն

Նազելի Միհրյան
Գլխավոր հաշվապահ

«Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

| | 2020թ. հազար դրամ | 2019թ. հազար դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Մուտքեր դրամաշնորհներից | 178,641 | 77,617 |
| Վճարումներ գնումների դիմաց | (114,303) | (119,270) |
| Վճարումներ ծառայությունների դիմաց | (46,708) | (50,030) |
| Վճարումներ աշխատակիցներին | (24,133) | (33,619) |
| Ֆինանսական աջակցություն | (13,261) | (1,783) |
| Վճարումներ այլ հարկերի գծով | (8,225) | (12,554) |
| Շահութահարկի վճարում | - | (375) |
| Այլ ելքեր | (69) | (221) |
| | **(28,058)** | **(140,235)** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Ասոցիացված կազմակերպությունից շահութաբաժնի ստացում | 41,000 | 60,000 |
| Փոխառությունների (տրամադրում)/ մարում, զուտ | 500 | (500) |
| Ավանդներից զուտ մուտք/(ելք) | - | 34,382 |
| Տոկոսային մուտքեր | - | 2,302 |
| | **41,500** | **96,184** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Փոխառությունների ստացում/(մարում), զուտ | - | 37,500 |
| | **-** | **37,500** |
| ***Դրամական միջոցների զուտ հոսք*** | ***13,442*** | ***(6,551)*** |
| Դրամական միջոցների գծով արտարժույթի փոխարժեքային տարբերություն | 1,370 | (253) |
| *Տարեսկզբի դրությամբ դրամական միջոցներ* | *31,950* | *38,754* |
| ***Տարեվերջի դրությամբ դրամական միջոցներ*** | ***46,762*** | ***31,950*** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի ղեկավարության կողմից 2021թ. ապրիլի 7-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շուշան Դավթյան
Տնօրեն

Նազելի Միհրյան
Գլխավոր հաշվապահ

BDO

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ` bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին*

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արաբկիր» Միացյալ Մանկական Բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի ու զուտ ակտիվի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այընտրանք:

Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

7 ապրիլի, 2021թ.
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.07.2021 12:55